ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 09.12.2014թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 40/14

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի 20.11.2014թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-40/14 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով նշված բողոքը և կից փաստաթղթերը, «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի Կենտրոնին ներկայացրած 26.11.2014թ. թիվ 01/13.1/2682-14 գրությունն ու կից փաստաթղթերը, «ՀՊՃՀ-ՇՀԱՊՁԲ-11/8-14/23» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2014թ. թիվ 4 արձանագրությունը և «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, ինչպես նաև լսելով Կենտրոնում կազմակերպված քննարկումների ժամանակ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի և Պատվիրատուի ներկայացուցիչների կարծիքները և ԳԲԽ-40/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 08.12.2014թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. <u>«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 20.11.2014թ. ներկայացրած բողոքով «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «ՀՊՃՀ-

ՇՀԱՊՁԲ-11/8-14/23» ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագրում (Հավելված 1) առաջին չափաբաժնի ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը նշված են Toshiba e-Studio 5560c մեքենայի նկարագրության հիման վրա: «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն առաջարկել է Konica Minolta bizhub C554e համարժեք սարքավորումն իր տեխնիկական բնութագրով, որը համալրված է նաև Fiery պրոֆեսիոնալ տպման կարգավորիչով, ինչի շնորհիվ անգամ ձեռք է բերում առավելություն չափաբաժնի նկարագրության մեջ նշված սարքի հանդեպ: Այնուամենայնիվ, գնահատող հանձնաժողովի արձանագրության համաձայն՝ առաջին չափաբաժնով ընտրություն է կատարվել ի օգուտ Toshiba e-Studio 5560c սարքավորման, որն իր տվյալներով զիջում է Konica Minolta bizhub C554e + IC-414 EFI controller համադրությամբ սարքավորմանը, ինչպես նաև այն ավելի թանկ է:

Ընկերությունը նշել է, որ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը և նույն հոդվածի 5-րդ մասը:

«Կոպիս Սերվիս» ՍՊԸ-ն գտնում է, որ Konica Minolta bizhub C554e մեքենայի տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու մասին Պատվիրատուի 20.11.2014թ. թիվ 06/2616-14 գրությամբ ներկայացված պատճառները խիստ վիճարկելի են, քանի որ դրանում նշված կետերի մեծամասնությամբ Ընկերության առաջարկած Konica Minolta bizhub C554e մեքենան ունի ոչ թե անհամապատասխանություններ, այլ զգալի առա-վելություններ:

Ընկերությունը, որպես լրացուցիչ տեղեկություն, բողոքում նշել է EFI Fiery պրոֆեսիոնալ տպման կարգավորիչներին վերաբերող այն փաստի մասին, որ Toshiba ընկերության ռուսաստանյան ներկայացուցչության պաշտոնական կայքում Toshiba e-STUDIO5560c շարքի մեքենաների համար նշված է, որ համալրվելով նմանատիպ EFI կարգավորիչներով դառնում են հզոր համակարգեր, որոնք ի վիճակի են իրագործել պրոֆեսիոնալ տպագրություն օֆիսային պայմաններում: Ընկերության առաջարկած Konica Minolta bizhub C554e արդեն իսկ ներկայացված է այդ շարքի կարգավորիչով, սակայն գնահատող հանձնաժողովի կողմից այն չի արժանացել անհրաժեշտ մասնագիտական ուշադրության Ընկերության համար անհասկանալի պատճառներով: Նշված կարգավորիչի առկայությունն Ընկերության առաջարկած մեքենան դարձնում է

առաջատար և դրան գումարած նաև «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի առաջարկած ցածր գինն անհասկանալի է դարձնում ընթացակարգի արդյուքնում նշված չափաբաժնով կատարված ընտրության իմաստը:

Ընկերությունը բողոքում նշել է նաև, որ ամեն սարքավորման նկարագրություն կազմվում է իր արտադրողի կողմից և տարբեր արտադրողների մոտ միևնույն տվյալը, ֆունկցիան կամ գործողությունը տարբեր ձևի են արտացոլվում: Սարքավորումների համարժեքությունը ապացուցվում է տեխնիկական տվյալների բովանդակային համապատասխանության հիման վրա, այլ ոչ թե նկարագրության մեջ եղած տերմինների տարբերությունների կամ նմանությունների: Գոյություն ունեն միջազգային անկախ լաբորատորիաներ, որոնք անց են կացնում սարքավորումների մասնագիտական համեմատություններ բոլոր չափանիշներով՝ որոշելու համար, թե որ մեքենան է առավել օպտիմալ համապատասխանում արտադրողի ներկայացրած տեխնիկական բնութագրին: Նմանատիպ անկախ լաբորատորիաներից է հանդիսանում Byers Laboratory LLC-ն, ում կողմից 2014թ. չորրորդ անգամ անընդմեջ Konica Minolta օֆիսային շարքը դասվեց լավագույն սարքավորումների շարքին և արժանացավ մրցանակի: Այդ շարքին է պատկանում նաև Ընկերության կողմից մրցույթին ներկայացված Konica Minolta bizhub C554e մեքենան: Նման մրցանակ ստանալու համար սարքավորումներն անցնում են երկարատև լաբորատոր տեստեր: Ընկերությունը խնդրել է նկատի ունենալ, որ Konica Minolta-ն իր bizhub C554e մոդելը նման արտադրողականության դիապազոնում (50-60 պատճեն մեկ րոպեում) ուղիղ մրցակից է համարվում Toshiba e-STUDIO 5560c մոդելին:

Ընկերությունը հայտնել է, որ բողոքարկում է «ՀՊՃՀ-ՇՀԱՊՁԲ-11/8-14/23» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 1-ին չափաբաժնի վերաբերյալ կայացրած որոշումը: Ընկերությունը խնդրել է վերանայել 1-ին չափաբաժնով «Թասկ» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու վերաբերյալ գնահատող հանձնաժողովի կայացրած որոշումը, որն առաջարկել է Toshiba e-Studio 5560c սարքավորումը, ինչը «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի առաջարկած IC-414 EFI Fiery պրոֆեսիոնալ տպման կարգավորիչով համալրված Konica Minolta bizhub C554e սարքավորումից ավելի թույլ է և թանկ:

Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է նաև պարզել՝ արդյոք «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ցանկանում էր ձեռք բերել Toshiba e-Studio 5560c սարք, թե համարժեք կամ ավելի լավ ու շահավետ սարքավորում, ինչի դեպքում ընթացակարգը կլիներ համահունչ «Գնումների մասին» ՀՀ օրենքի կետերին: Արդյունքում կայացված որոշման համար հիմք է ընդունվել հրավերով սահմանված պայմաններին Ընկերության ներկայացրած սարքավորման տեխնիկական բնութագրի անհամապատասխանությունը, որի հետ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն համաձայն չէ:

2. «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

«Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ն Ընկերության բողոքի վերաբերյալ 26.11.2014թ. N 01/13.1/2682-14 գրությամբ հայտնել է, որ 2014թ. նոյեմբերի 20-ի թիվ 06/2616-14 գրությամբ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ին ներկայացրել է գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով Ընկերության առաջարկած ապրանքի մերժման հիմնավորումները:

Պատվիրատուն 2014թ. նոյեմբերի 20-ի թիվ 06/2616-14 գրությունում նշել է, որ գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնով Ընկերության առաջարկը մերժվել է հայտում ներկայացված տեխնիկական բնութագրին չհամապատասխանելու պատճառով, մասնավորապես.

- հայտով ներկայացված սարքավորման տպագրող թղթի չափը 320x450մմ է, հրավերով պահանջված 330x483մմ-ի փոխարեն,
- հայտով ներկայացված սարքավորման տպագրվող բաներային առավելագույն չափը 297x1200մմ է, հրավերով պահանջված 313x1200մմ-ի փոխարեն,
- հայտով ներկայացված սարքավորման հիշողությունը 250GB և 2MB RAM է, հրավերով պահանջված 320GB և 2MB RAM-ի փոխարեն,

- հայտով ներկայացված սարքավորման թողունակությունը 600x600dpi և 1200x1200dpi է, հրավերով պահանջված 600x600dpi 8bit և 1200x1200dpi 2bit-ի փոխարեն,
- հայտով ներկայացված սարքավորումը չունի հրավերով պահանջված Colour Modes (Auto-Colour (ACS), Colour, Twin Colour, B&W) և Colour Settings (Icc profiles management, Brightness, Saturation, Contrast, Colour Balance) կարգավորումները:

Ինչ վերաբերում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի վերոնշյալ հոդվածներում ամրագրված դրույթները խախտված լինելու վերաբերյալ Ընկերության բողոքում նշված փաստարկներին, ապա Պատվիրատուն հայտնել է, որ գնահատող հանձնաժողովն առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով և կայացրել է օրենքից բխող որոշում: Առաջին տեղը զբաղեցրած մանակիցը որոշվել է Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասին 1-ին կետի համաձայն, բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, իսկ գնման ընթացակարգը կազմակերպվել և անցկացվել է թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով:

3. ԳԲԽ-40/14 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 08.12.2014թ. եզրակացությունը և առաջարկել է «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի 20.11.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

4. ԳԲԽ-40/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-40/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՊՃՀ-ՇՀԱՊՁԲ-11/8-14/23» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցել է նաև «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն:

2. «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ն Ընթացակարգի Հրավերով պահանջել է գունավոր պատճենահանող մեքենա ՏՈՇԻԲԱ Ե-ՍՏՈՒԴԻՈ 5560ԼԱՖ /TOSHIBA (e-studio5560C) կամ համարժեք: Տեխնիկական բնութագրով, մասնավորապես, պահանջվել է սարքի թղթադարանում A6Ռ թղթի չափը՝ 330x483 մմ, իսկ հիշողությունը՝ 320 GB և 2 GB RAM, սակայն Ընկերությունը ներկայացված հայտով 1-ին չափաբաժնի համար առաջարկել է գունավոր պատճենահանող մեքենա՝ Konica Minolta bizhub C554e կոմպլեկտավորված՝ կոնտրոլլեր IC-414 (EFI), PC-410 թղթադարան, OT-503 ելքային դարակ և 1 կոմպլեկտ տոներներ CMYK և ապրանքի տեխնիկական բնութագրում նշել է. «սարքի թղթադարանում A6-SRA3, լայնություն: 90 մինչև 320 մմ x երկարություն: 139.7 մինչև 1,200մմ ընտրովի չափս», իսկ հիշողությունը՝ 250 GB և 2 GB RAM:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 13.11.2014թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի «բ» ենթակետի 1-ին կետով կայացրած որոշմամբ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնով մերժվել է՝ հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու հիմքով (նշված չափաբաժնով Ընկերության ներկայացրած ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին):

4. Կենտրոնում 05.12.2014թ. ժամը 14:30-ին կազմակերպված քննարկման ժամանակ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի տնօրենն ընդունեց, որ Ընկերության 1-ին չափաբաժնի համար որպես համարժեք ներկայացրած ապրանքատեսակի թղթի չափը չի համապատասխանել Հրավերով նախատեսված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված թղթի չափին:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումները

Քննելով «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի 20.11.2014թ. ներկայացրած բողոքը, Խորհուրդ գտնում է, որ այն ենթակա է մերժման հետևյալ հիմնավորմամբ.

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում: Նշված հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների վրա:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի վերոնշյալ դրույթները խախտված լինելու հանգամանքի վերաբերյալ բողոքում նշված փաստարկներն անհիմն են, քանի որ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ն մյուս մասնակիցների հետ մրցակցության հավասար պայմաններում մասնակցել է Պատվիրատուի կողմից վերը նշված ծածկագրով կազմակերպված գնման գործընթացին, իսկ գնման առարկայի բնութագրերը ձևակերպված են եղել հստակ և դրանում ամբող-

ջությամբ նկարագրված է եղել ձեռքբերվող ապրանքատեսակը՝ բացառելով այլընտրան-քային մեկնաբանությունը:

Բացի այդ, նշելով պահանջվող ապրանքի ֆիրմային անվանումը, Պատվիրատուն Հրավերով նախատեսել է համարժեք ապրանքի ներկայացման հնարավորությունը, ինչից հետևում է, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել նաև Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերվում է Ընթացակարգի առաջին չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած որոշման վիճարկմանը, ապա գտնում ենք, որ Ընկերության կողմից վերոհիշյալ չափաբաժնով ներկայացրած ապրանքատեսակը չի համապատասխանել Հրավերով նախատեսված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրին (օրինակ, Հրավերով պահանջված և Ընկերության կողմից առաջարկված սարքի թղթադարանում թղթի չափի ու սարքի հիշողության միջև առկա տարբերությունների պայմաններում), ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, ըստ որի՝ բավարար են գնահատվում միայն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, 13.11.2014թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի «բ» ենթակետի 1-ին կետով որոշում է կայացրել «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի հայտը 1-ին չափաբաժնով մերժել՝ ներկայացված հայտը հրավերով սահմանված պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Հարկ է նշել, որ Կենտրոնում 05.12.2014թ. ժամը 14:30-ին կազմակերպված քննարկման ժամանակ «Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի տնօրենն ընդունեց, որ Ընկերության 1-ին չափաբաժնի համար որպես համարժեք ներկայացրած ապրանքատեսակի թղթի չափը չի համապատասխանել Հրավերով նախատեսված ապրանքատեսակի տեխնիկական բնութագրով սահմանված թղթի չափին:

Գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի 13.11.2014թ. թիվ 4 արձանագրության 1.1 կետի «բ» ենթակետի 1-ին կետով կայացրած որոշումը՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով Ընկերության ներկայացրած հայտը մերժելու վերաբերյալ, համապատասխանում է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Կոպի Սերվիս» ՍՊԸ-ի 20.11.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Լուսինե Ոսկանյան**

Անդամ՝ **Վիկտորյա Ղազարյան**